ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 3

աշխատանքային գիրք-տետր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների
երրորդ դասարանի սովորողների համար

Երևան - 2025

ՀՏԴ
ԳՄԴ
«**Կերպարվեստ 3**» **աշխատանքային գիրք-տետր** /Սարգսյան Ս. Մ., Պետրոսյան Ս. Ս.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2025. - 68 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լ.Ա. Մնացականյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս.Վ.

Հեղինակներ՝
Սարգսյան Սևադա Մուշեղի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Համակարգչային ձևավորում՝ Սարգսյան Ս.Մ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երրորդ դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Կերպարվեստ» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

ՄՈՒՏՔ

Սովորողների կրթության, նրանց ներդաշնակ զարգացման գործում մեծ է կերպարվեստի դերը: Դպրոցում կերպարվեստի դասավանդման նպատակը գեղագիտական աշխարհընկալմամբ, հարուստ հոգևոր աշխարհով, գեղարվեստական ճաշակով և ստեղծագործական երևակայությամբ, ազգային և համամարդկային արժեքներին հարգանքով վերաբերվող, արվեստի գործերը հասկացող և գնահատող անձի ձևավորումն է:

3-րդ դասարանի կերպարվեստի գիրք-տետրը կազմված է հանրակրթության չափորոշիչների առաջադրված խնդիրների, առարկայական գիտելիքների վերջնարդյունքների պահանջների և համապատասխան կարողունակությունների ձևավորման հիմքով:

Յուրաքանչյուր առաջադրանքի հանձնարարությունը ձևակերպված է ըստ սովորողի արդեն ձեռք բերած գիտելիքի, ինչպես նաև ուղղորդող հարցադրումներով, որոնք առավել նպաստում են առաջադրանքի բազմակողմանիորեն ընկալմանը, ապահովում են իմացածի և չիմացածի կապը: Ուղղորդող հարցադրումները, տեսական հարցերը, գործնական առաջադրանքները մշակվել են յուրաքանչյուր բովանդակության գնահատման չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով տարբերակված մոտեցումը:

Առաջադրանքները պարունակում են դեկորատիվ կիրառական գործունեություն, թեմատիկ նկարչություն, արտանկարչություն, բնօրինակից նկարչություն, ձևավորում, նկարչություն երևակայությամբ, հիշողությամբ, որոնց գործնականորեն կիրառումը նպաստում է սովորողների մոտ հասարակական որոշակի հմտությունների, կարողունակությունների ձևավորմանը: Առկա են նաև ստեղծագործական բնույթի առաջադրանքներ: Հարցադրումները և վարժությունները մշակվել են՝ հաշվի առնելով միջառարկայական հորիզոնական, ուղղահայաց, զուգահեռ և հետևաբար, պարուրաձև կապը:

Բոլոր առաջադրանքների անհատական կատարումը պարտադիր չէ. դրանց խնդիրները կարող են բաշխվել սովորողների միջև՝ կախված վարժության բարդությունից:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Աշխատանք գունավոր կամ հասարակ մատիտներով

- Աշխատանք ջրաներկով կամ գուաշով

- Աշխատանք մկրատով

- Աշխատանք սպունգով

- Աշխատանք հավելվածի նյութերով

- Ուսումնասիրության նյութ

ԳՈՒՅՆԸ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Առաջադրանք 1. Կերպարվեստում գույնի միջոցով պատկերում ենք առարկաների ծավալները, լույսերն ու ստվերները:
Գույնի միջոցով ենք տարբերում զանազան իրեր և պատկերներ:
Ասա՛, թե ո՞ր թիվն ի՞նչ գույնով է պատկերված:

Առաջադրանք 2. Քեզ արդեն հայտնի գունային շրջանը բաժանվում է տաք և սառը գույների:
Տաք գույներն այն գույներն են, որոնք հիշեցնում են արև, կրակ, ջերմություն, ընտանիք:
Սառը գույները թողնում են ցրտի տպավորություն, հիշեցնում են ձյուն, սառույց, ջուր:
Գունային շրջանի վրա ցու՛յց տուր սառը և տաք գույները:



Առաջադրանք 3. Հիմնական գույներն են կարմիրը, կապույտը, դեղինը:
Պաստելի տուփի մեջ գտի՛ր հիմնական գույները և նրանց երանգները:



Առաջադրանք 4. Ջրաներկի տուփի մեջ ցու՛յց տուր գույների մուգ և բաց երանգները:

Առաջադրանք 5. Ուրվագծի և ուրվապատկերի միջի լուսանկարները փակցրո՛ւ իրենց տեղում (հավելված 1):
Սառը գույները պլաքով ուղղի՛ր դեպի աջ հատված, իսկ տաք գույները՝ ձախ:



Առաջադրանք 6. Թղթի հարթությունն ամբողջությամբ ներկի՛ր տարբեր գույնի մատիտներով:
Գտի՛ր տաք և սառը գույները:

Առաջադրանք 7. Ծալի՛ր թուղթը դեպի կենտրոն երկու հավասար մասի:
Կտրի՛ր կարմիր գծիկներով նշված հատվածը:



Առաջադրանք 8. Ուղղի՛ր էջը: Թվարկի՛ր պատուհանի միջից երևացող գույները:



Առաջադրանք 9. Թղթի մի հատվածը ներկի՛ր սառը երանգներով, մյուս հատվածը՝ տաք երանգներով:
Բացի՛ր էջ 11-ը և ասա՛՝ ինչ գույներ ես տեսնում պատուհանից:

Առաջադրանք 10. Տարվա ո՞ր եղանակներին են պատկերված ծառերը:



Առաջադրանք 11. Անվանի՛ր տարվա եղանակները և ցու՛յց տուր:

Առաջադրանք 12. Փակցրու՛ տունը համապատասխան տեղում (հավելված 2):

Ի՞նչ գույներ ես տեսնում, ցու՛յց տու ր և ներկի՛ր դատարկ վանդակներում:

Առաջադրանք 13. Տարբեր գույներով արտահայտի՛ր տարվա եղանակները:

Գարուն	Ամառ
Աշուն	Ձմեռ

Առաջադրանք 14. Շարունակի՛ր նկարել ծաղիկները և պատկերի՛ր գարուն:

Առաջադրանք 15. Ընդգծի՛ր սարը և պատկերի՛ր ամառ:



Առաջադրանք 16. Պատկերի՛ր աշուն քո նախընտրած գույներով:

Առաջադրանք 17. Արտանկարի՛ր փաթիլները տարբեր չափերով և պատկերի՛ր ձմեռ:

Առաջադրանք 18. Յուրաքանչյուր պետության դրոշի ներքևի հատվածում գունավոր մատիտներով միախառնի՛ր տվյալ դրոշի վրայի գույները: Անվանի՛ր, թե ի՞նչ գույն ստացար:

Հայաստան

Շվեդիա

Գերմանիա

Առաջադրանք 19. Փակցրո՛ւ դրոշներն իրենց տեղում և ներքևի հատվածում գուաշով միախառնի՛ր տվյալ դրոշի վրայի գույները: Անվանի՛ր, թե ի՞նչ նոր գույն ստացար (հավելված 3):

Ֆրանսիա

Ճապոնիա

Իտալիա

Առաջադրանք 20. Ի՞նչ գույնի դրոշներ ես տեսնում, ո՞ր պետության դրոշն ես ճանաչում:

Առաջադրանք 21. Պատկերի՛ր քեզ դուր եկած դրոշը:



Առաջադրանք 22. Ի՞նչ առարկաների ուրվապատկերներ ես տեսնում:
Փակցրու՛ առարկաներն իրենց տեղում:
Ասա՛, թե ի՞նչ գույներով են գրված բառերը (հավելված 4):

Մանուշակագույն բաժակ



Կարմիր գնդակ

Նարնջագույն թեյնիկ

Շագանակագույն մատիտ

Առաջադրանք 23. Ի՞նչ առարկաների ուրվագիծ ես տեսնում:
Ներկի՛ր առարկաները նշված գույնով:
Ասա՛, թե ի՞նչ գույներով են գրված բառերը:

Դեղին փուչիկ



Կանաչ տերև

Կապույտ գրիչ

Առաջադրանք 24. Նայի՛ր օրինակին և խաչաձև ուղղություններով բոլոր կետերը միացրո՛ւ միմյանց:
Առաջացած երկրաչափական պատկերներից յուրաքանչյուրը ներկիր տաք և սառը գույներով:



Առաջադրանք 25. Ընդգծի՛ր և շարունակի՛ր օվալաձև գիծն այնպես, որ ամբողջ հարթության վրա ստանաս տարբեր չափի շրջաններ: Գտի՛ր ձկներին, ավելացրու՛ աչքը, պոչը, թեփուկներ և գունավորի՛ր ամբողջ հարթությունը: Քանի՞ ձուկ նկարեցիր:



Առաջադրանք 26. Նեղ կպչուն ժապավենը փակցրու՛ գծերի վրա: Յուրաքանչյուր հատվածը ներկի՛ր տարբեր գույներով և մոտեցումներով՝ վրձին, սպունգ, դաջում և այլն:

Առաջադրանք 27. Պոկի՛ր ձախ կողմի կպչուն ժապավենը և սոսնձով խաչաձև փակցրու այս էջում:
Ի՞նչ պատկեր ստացար, շարունակի՛ր և ներկի՛ր ամբողջ թղթի հարթությունը:

Առաջադրանք 28. Շարունակի՛ր ներկել շրջանները ցանկացած գույնի մատիտներով:
Թվարկի՛ր տաք և սառը գույները: Նշի՛ր գույների բաց և մուգ երանգները:



Առաջադրանք 29. Նայի՛ր օրինակին և պատկերի՛ր տարբեր չափի ուղղանկյուններ այնպես, որ հատվեն միմյանց: Գունավորի՛ր և թավ մատիտով ավելացրու՛ փոքրիկ խորանարդներ, ինչպես օրինակում է: Ի՞նչ պատկեր ստացար, պատմի՛ր:



Առաջադրանք 30. Տարբեր գույնի մատիտներով ներկի՛ր երկրաչափական պատկերները՝ օգտվելով օրինակից:



Առաջադրանք 31. Ընկերոջդ հետ հերթականությամբ պատկերի՛ր տարբեր երկրաչափական պատկերներ: Ստացված հատվածները ներկի՛ր տարբեր գույներով (յուրաքանչյուրդ մեկ գույն):

Առաջադրանք 32. Ի՞նչ գույնի է երկար մատիտը:

Մեծ և փոքր գնդակները փակցրու՛ համապատասխան տեղերում (հավելված 5):



Առաջադրանք 33. Երկար ճանապարհի սկզբում նկարի՛ր մեծ ծառ, իսկ ճանապարհի վերջում՝ փոքր տուն:
Տունը ծառից փոքր է երևում, որովհետև գտնվում է հեռվում:

Առաջադրանք 34. Ասա՛, ո՞ր մրգերն են շատ, որը՝ քիչ:
Ո՞ր ծառից է ցածր մրգատու ծառը:

Առաջադրանք 35. Նկարի՛ր բարձր շենք՝ շատ պատուհաններով։

Առաջադրանք 36. Նեղ պատուհանի ապակիները ներկի՛ր մանուշակագույն, իսկ լայն պատուհանինը՝ կապույտ գույնի:

Առաջադրանք 37. Նեղ վրձնով ներկի՛ր լայն դարպասները: Ասա՛՝ ինչ գույնով են ներկված բարձր սյուները:



Առաջադրանք 38. Հայերեն ամենամեծ ձեռագիրը կոչվում է «Մշո ճառընտիր», իսկ ամենափոքրը՝ «Եկեղեցական տոնացույց», որոնք գտնվում են Մատենադարանում:

Առաջադրանք 39. Ցու՛յց տուր հաստ գիրքը և ասա՛, թե քանի՞ հատ են բարակ գրքերը։

Առաջադրանք 40. Միևնույն մասնիկն անընդհատ կրկնելով կստացվի զարդագոտի:
Ընդգծի՛ր և գունավորի՛ր զարդանախշը:



Առաջադրանք 41. Գունավոր մատիտներով ընդգծի՛ր 1-ին զարդագոտին, 2-րդ զարդագոտին գունավորի՛ր ցանկացած գույնով, 3-րդ զարդագոտին շարունակի՛ր գունավորել տրված գույներով:



Առաջադրանք 42. Ընդգծի՛ր զարդանախշի օրինակները և գունավորիր:



Առաջադրանք 43. Ստեղծի՛ր զարդանախշ երկրաչափական պատկերներով՝ անընդհատ կրկնելով դրանք: Գունավոր մատիտներով ներկի՛ր քո ստեղծած զարդագոտին:







քառանկյուն + եռանկյուն + շրջան



Առաջադրանք 44. Ուսումնասիրի՛ր և ընդգծի՛ր թռչունի պատկերման հաջորդական քայլերը։



Առաջադրանք 45. Պատկերի՛ր թռչուն՝ օգտվելով քայլաշարից և գունավորի՛ր։

Առաջադրանք 46. Գունավոր մատիտներով եզրագծի՛ր թռչուններին և գունավորի՛ր:
Ինչի՞ մասին են խոսում թռչունները:



Առաջադրանք 47. Ծառին պատկերի՛ր թռչուններ՝ օգտվելով օրինակներից և գունավորիր ամբողջ նկարը:







Առաջադրանք 48. Ուսումնասիրի՛ր, թե ինչպես կարելի է նկարել ծաղկման երկրաչափական տարբեր պատկերներով և մարմիններով: Ցու՛յց տուր մեծ շրջանը, նեղ և երկար գլանը:



Առաջադրանք 49. Երկրաչափական մարմիններով և պատկերներով նկարի՛ր ծաղկման, մրգեր և գունավորի՛ր։

Առաջադրանք 50. Էջի ներքևի հատվածը ներկի՛ր կապույտ գույնի գուաշով և մինչ չորանալը սանրով կամ վրձնի հակառակ կողմով ալիքաձև խազի՛ր ձախից դեպի աջ: Շարունակի՛ր նկարել՝ ավելացնելով ձկներ, քարեր, սարեր, երկինք և այլն: Քո ավարտած նկարը կոչվում է Ծովանկար:

Առաջադրանք 51. Նկարի՛ր ընկերոջդ դեմքը և թղթի սպիտակ հատվածը ներկի՛ր իր հագուստի մուգ կամ բաց երանգներով:
Քո ավարտած նկարը կոչվում է Դիմանկար:

Առաջադրանք 52. Պատկերի՛ր սեղանին դրված սափորը և մրգերը: Քո ավարտած նկարը կոչվում է Նատյուրմորտ:

Առաջադրանք 53.Պատկերի՛ր նույն նատյուրմորտը տարբեր կարծրության հասարակ մատիտներով:

ՆԱԽԱԳԻԾ
ԲՆԱՆԿԱՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

[1]

Նախագիծն ամփոփում է գիրք-տետրում ներկայացված գիտելիքները ինչպես գործնական, այնպես էլ սովորողների տեսական գիտելիքների մակարդակով: Բացահայտում է գործնական հմտությունների և կերպարվեստում հասկացությունների մասին գիտելիքների աստիճանը: Մասնավորապես.

Հեռու և մոտ	Մոտ և հեռու
Մուգ և բաց	Բաց և մուգ
Բարձր և ցածր	Ցածր և բարձր
Փոքր և մեծ	Մեծ և փոքր
Տաք և սառը	Սառը և տաք
Ուժեղ և թույլ	Թույլ և ուժեղ

Առաջադրանքը կարելի է կատարել անհատական, զույգերով (սովորող-սովորող, սովորող-ուսուցիչ), կամ խմբային աշխատանքի ձևաչափով:

[1]Լուսանկարը՝ Էդգար Հարությունյանի:

Առաջադրանք 1. Ուսումնասիրի՛ր քայլերը, որոնք պետք է կատարես բնանկար ստեղծելիս:

Քայլ 1



2 Үлгүүр

3 Үлгі

Առաջադրանք 2. Ուսումնասիրի՛ր, թե ինչպես կարելի է սկսել և ավարտել բնանկարը։





Առաջադրանք 3. Պատռի՛ր թղթերը, քայլաշարի օրինակով պատկերի՛ր սարեր: Շարունակի՛ր և ավարտի՛ր բնանկարը:

Առաջադրանք 4. Փակցրո՛ւ պատռված թղթերը և ավարտի՛ր նկարը։

Առաջադրանք 5. Կտրատի՛ր կամ պատռի՛ր գունավոր թղթեր տարբեր ձևի և չափի:
Ընկերոջդ հետ ստեղծի՛ր բնանկար:

ՈՒՍՈՒՑՉԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ (ամփոփիչ եզրակացություն)

2.

3.





4.

5.

Սարգսյան Ս. Մ., Պետրոսյան Ս. Ս.

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների
երրորդ դասարանի սովորողների համար

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ.Մալյան 43